

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՈԳՆԱԿԻԱԿԵՐՏ —gal վԵՐՋԱԾԱՆՑԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐՈՒՄ

1. Միջին և նոր արևմտաիրանական լեզուներում, ինչպես հայտնի է, անվան հոգնակի ձևի կազմությունը հանգում է հիմնականում հին իրան. սեռական հոգնակի*—anam և վերացական անուններ կազմող *—ya—ðwa—վերջավորություններին, որոնք համապատասխանորեն ավել են —ān/—un և՛ (i/i)hā¹. Մրանց հետ միասին, սակայն, որոշ նոր բարբառներ ի հայտ են բերում հոգնակիի կազմության նոր միջոցներ, որոնցից է, մասնավորապես—gal(—yal, al և —el տարբերակներով) վերջածանցը, որը հանդիպում է հիմնականում շնչավոր առարկաներ ցույց տվող անունների հետ²: Այն տարածված է գլխավորապես Իրանի կենտրոնական բարբառներում, ֆարսում, Ջեֆրեում (Իսֆահանից հյուսիս-արևմուտք), ինչպես նաև հյուսիս արևմտյան Աիվանդի բարբառում, գուրանիում, քրդական հարավային բարբառներում և բելուշերենում³: Հիշյալ ածանցը՝ որպես հոգնակի կազմության ձևավույթ, լայն տարածում ունի նաև լուրական խոսվածքներում (բախտիարի և այլն): Այն բարրառներում, որտեղ հանդես է գալիս այս ածանցը, որպես օրենք, նրան զուգահեռ միշտ օգտագործվում են նաև վերելում նշված հոգնակիակերտ միջոցները՝—ān/—ān, ā(<hā): Այս երկավույթի պատճառը հավանաբար այն է, որ սկզբնապես այն արտահայտել է հավաքականություն իմաստ, որը դեռևս կենդանի է օրինակ, հարավային քրդական Սուլեյմանիյեի բարբառում, հմմ. ga'goul gāgal 'խոշոր եղջերավոր անասունների հոտ', mē 'ոչխար' megal 'ոչխարների հոտ' և այլն⁴: Հմմ. նաև մուկրիում՝ kuŋgal 'տղաներ' (kuŋ 'տղա'), barxagal/barxal՝ դառներ' (barx 'գառ')⁵: Մինչևի բարբառում՝ آدیگل 'մարդիկ', آدیگل թշնամիներ, آدیگل աղջիկներ և այլն⁶ հետաքրքրա-

կան է այն փաստը, որ չնայած քրդերենի հյուսիսային կուբմանջի բարբառներում այս ձևույթը ղոլություն չունի, այնուհանդերձ կարելի է նշել մի օրինակ՝ sayāl 'շներ' (հմմ. Sa—sayāle xwa hildā hat jam mē) ռիւր անեցիներին (բռ. շներին) հավաքեց եկավ մեզ մոտ՝. bāvē mīn... sayāl cā: āliyā. didā sakīnāndīne ճհայրս շներին կանգնեցնում էր չարս ըսլըրը)՝ 'Խուրանիում, ինչպես նաև բելուջերենում, այս ածանցը ունի բավական սահմանափակ կիրառություն. կանդուլայի բարբառում (գուրանի)՝ isfahānyal 'իսֆահանցիներ', բելուջերենում՝ Jangāl 'կանալք', malel 'տներ' և այլն⁸; Ինչպես ասվեց,—gal ածանցը լայն տարածում ունի նաև լուրական խոսվածքներում. հմմ. օրինակ, Մեծ լուրերի խոսվածքում՝ zangal 'կանալք', hōnaya 'տներ', āōōnyal 'մարդիկ', aspal 'ձիեր', saral 'գլխներ' և այլն⁹; Բախարարի և մամասանի խոսվածքներում՝ gīrzayal 'առնետներ', xargal 'ավանակներ', sagal 'շներ', hūnaya 'աներ' և այլն¹⁰; Լուրի բարբառում այս ածանցով կազմում են նաև ցուցական դերանունների հոգնակի ձևերը՝ ī(n) ալս, īngal 'սրանք' ū(n) 'այն', ūngal 'նրանք'։—gal ածանցով հոգնակի կազմությունները լուրիում հրքեմն ստանում են նաև կրկնակի հոգնակիություն՝—ūn ցուցիչով՝ korgal/korgalūn 'տղաներ' zīngal/zīngalūn 'կտնալք', hārgal/hārgalūn 'ավանակներ' (հմմ. korgalūnā nūn bādīn 'տղաներին հաց տվեք')¹¹, Հմմ. նաև Զեֆրեի բարբառում (-gel ձևով)՝ pūr-gel-ō 'տղաներ', esser—gel—ō 'աստղեր' և այլն¹²։

Խնդրո առարկա ածանցը -gēlā ձևով (բավական սահմանափակ կերպով) հանդես է գալիս նաև պամիրյան լեզուներում՝ շուղնաներենում, ոււշաներենում, բարթանգերենում. հմմ. ոււշ. zowgalā 'կովեր', wīlīcgalā 'թռչուններ'.¹³ bačgalā երեխաներ¹⁴։

Ինչպես կարելի է նկատել, -gal ուլ հոգնակի կազմությունները հիմնականում ուարածված են Իրանի կենտրոնական և հյուսիս-արևմտյան շրջաններում։ Այս արեալից է այն, հավանաբար, թափանցել այլ բարբառային շրջաններ։

2. Սկսած Ֆ. Յուստիի հայտնի աշխատությունից, հետազոտողները համամիտ են այն կարծիքի հետ, որ հիշյալ ձևույթը ծագումով նույնն է՝ Իրանական լեզուներում տարբեր իմաստային երանգներ ունեցող gal լեքսեմի հետ. հմմ. քրդերենում՝ gal 'հետ, միասին', (-ak ածանցի հետ՝ galak 'շատ'), կենտրոնական բարբառներում և պարսկերենում՝ galah 'հոտ' և այլն¹⁵։ Կուբմանջիում -gal 'ձևույթը կազմում է նաև galī կոչական մասնիկը (հմմ. galī mlrovān 'օ՝ մարդիկ')¹⁶։ Այս

բառը ծագում է հին իրանական *garda-/grda- ձևից, որը ավանդված է հին պարսկերենում (հմմ. արամեերենում վկայված grd')¹⁷:

Այս լեքսիմի՝ որպես հոգնակիակերտ ձևույթ հանդես գալու համար տիպաբանական օրինակ կարող է ծառայել ոչամբրյան ռարիկոլերեն, շուգնաներեն և սուշաներեն լեզուներում հոգնակի կազմության մի ձև, որը հանգում է պարսկա-արաբական xal 'բազմություն' բառին և որը նույնպես օգտագործվում է որպես հոգնակիակերտ ձևույթ. հմմ. sowōrxe 'հեծյալներ', xawrīcxī 'աղաներ' և այլն¹⁸:

Г. С. АСАТЯН

СУФФИКС МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА—GAL В ИРАНСКИХ ЯЗЫКАХ

Резюме

Как известно, в средне- и новозападноиранских языках суффиксы, образующие мн. число именн, восходят главным образом к др.—прап. окончанию родительного падежа мн. числа *—ānāt (давшему ān/—ūn) и к др.—иран. форманту, образующему абстрактные имена, *—īya—īwa- (давшему (l/i)hā). Однако, наряду с этими, в новозападноиранских языках встречаются новообразования, среди которых можно отметить суффикс -gal, который встречается в основном в диалектах Центрального Ирана, в гурани, в южнокурдских диалектах, в лурском и—в ограниченной степени—в белуджском. Употребление этого суффикса для образования мн. числа отмечено спорадически и для восточноиранских диалектов (памирских). Главным центром распространения указанного суффикса, однако, является Центральный Иран. Суффикс -gal восходит к имеющей различные семантические оттенки в иранских языках лексеме gal (ср. в курдском: gal «вместе», galak «много», gal «люди» (вокативная частица), в персидском: galah «стадо» и т. п.). Это слово восходит к др. иран. *gard-/grda- (ср. араб. grd').

- 1 Sê'u R. Gauthiot. Du pluriel persan en-hâ.—MSL, t. 20, f. 2, p. 72—75—
 իկս օրենքից, բացառութիւն են կազմում մասնավորապէս, քրդերենի հյուսիս-
 սային բարբառները, որտեղ թվի քերականական կարգը արտահայտվում է
 միայն թեք հոլովի ձևերում և իզաֆետային բառակապակցութայն մեջ և կապ-
 ված է սեռի կատեգորիայի հետ: Ուղիղ հոլովում թվի կարգը արտահայտվում
 է բայ-ստորոգյալի միջոցով հմմ. xort hât 'երիտասարդը եկավ' և՛ xort hatin
 'երիտասարդները եկան', min mariv sând/-in ես մարզ/-ի և ուղարկեցի եւն:
 կուրմանջիի հյուսիս արևելյան բարբառներում իզաֆետային բառակապակ-
 ցութիւնում անունների հոգնակի կազմութայն համար հանդես է գալիս—êd
 վերջավորութիւնը, որի ծագումը ջարդ պարզորոշ որոշված չէ. հմմ. այս
 ձևութի ստուգարանութայն մի փորձ՝ Р. Л. Цаболов, Очерк исторической
 морфологии курдского языка. М., 1978, էջ 9, ըստ որի —êd-ը առաջացել է
 այսպէս կոչված շարահյուսական մակարդակում ձևութների միաձուլումից՝
 -ên (< -ân)+dl *-ênd, որը հյուսիս արևելյան բարբառներում տվել է —êd
 իսկ կուրմանջիի հյուսիս արևմտյան բարբառներում՝ -ên:
- 2 G. Morgenstierne, Neu-Iranische Sprachen.—HbO. Iranistik, Erster Absch
 nitt. Leiden-Köln, 1958, S. 162.
- 3 R. Gauthiot, Op. cit., p. 73, Iranische Dialektaufzeichnungen aus den Nach
 lass von P. C. Andreas. Berlin, 1939, S. 176—178.
- 4 Sê'u D. N. Mackenzie, Kurdish Dialect Studies. 1, London, 1961, §177, n. 1,
 p. 64.
- 5 К. Р. Эюбя, И. А. Смирнова, Курдский диалект Мукри. Ленинград, 1968
 с. 21.
- 6 F. Justi, Kurdische Grammatik. SPb, 1880, S. 123—124.
- 7 Մեր անձնական գրառումներից, և՛ ә'рәб Шамилов. Бәрәвок. Ереван, 1969
 էջ 62.
- 8 R. Gauthiot. Op. cit., էջ 73, O. Mann, K. Hadank, Kurdisch-persische Fors-
 chungen. Bd 2, Abt. III, Berlin, 1930, s. 104. տե՛ս նույն տեղում, մասնա-
 փորապէս, ծան. № 1: Sê'u նաև՝ W. Geiger, Etymologie des Balûči. Mün-
 chen, 1890, S. 17.
- 9 O. Mann, Kurze Skizze der Luridialekte.—SPAW, 39, 1904, S. 1181.
- 10 А. А. Керимова, Лурские и бахтиярские диалекты. Основы Иранского
 языкознания. Новоиранские языки. М., 1962, с. 293—294.
- 11 Մեր գրառումներից:
- 12 W. Geiger, Kleinere Dia'ekte und Dialektgruppen.—GIPH, 1 Bd, 2 Abt.
 Strassburg, 1898—1901. էջ 392; հմմ. նաև՝ Опыт историко-типологического
 исследования иранских языков, т. II, Москва, 1975, էջ 230—231:
- 13 Опыт..., էջ 231:
- 14 W. Geiger, Op. cit., էջ 314.
- 15 հմմ. F. Justi, Op. cit., S. 124. E. Wilhelm. La Langue des Kurdes.—Le
 Muséeon, 1883, էջ 436; J. Darmasteter, Études Iranennes II. Paris, 1883,
 էջ 91; R. Gauthiot, Op. cit., էջ 73.
- 16 Dj. Bedir Khan, R. Lescot. Grammaire Kurde (Dialecte Kurmandji). Paris,
 1970, p. 98.

- 17 *Տե՛ս մանրամասն՝* H. S. Nyberg, A Manual of Pahlavi II, Wiesbaden, 1974, p. 80. Geo Widengren, Henrik Samuel Nyberg and Iranian Studies.—Acta Iranica-5, Leiden, 1975, p. 438—439.
- 18 *Տե՛ս մանրամասն՝* Т. Н. Пахалина, Памирские языки. Москва, 1969, с. 22; հմմ. նաև R. Gauthiot, Op. cit. p. 73.